

ԿԻՊՐՈՍԻ ԹՐԶԱԿԱՆ ԲԱԺՆԻՆ ՀԱՍՄՐ

ՏԵՆՔԹԱՇՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ

Կիպրոսի թրքական բաժնի ղեկավար Ռաուֆ Տենքթաշը, որ յույն կիպրացիներու հետ բանակցություններ կը վարէ...

Կիպրոսի թրքական բաժնին մէջ Ապրիլին պիտի կայանան նախագահական ընտրութիւններ:

Կիպրոսի նախագահ Կյաֆքոս Քլեբիտէս Նիւ Եորքի մէջ հանդիպումներ ունեցան Կիպրոսի տագնապը քննարկելու համար:

Կիպրոսի թրքական բաժնի վարչապետ Տէրփիշէ Էրօղլու, որ 1993ին պարտութեան մատնուեցաւ Տենքթաշի կողմէ, նախագահութեան թեկնածու է:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՌՈՒՍԻԱ - ՉԻՆԱՍՏԱՆ ԶԱՐԻՒՂԱՏԱՐԻ ԿԱՌՈՒՅՈՒՄ

Ռուսիոյ ուժանիւթի նախարար Վիքթոր Քալիուշնիի գլխավորած բարձրաստիճան պատուիրակութիւնը յառաջիկայ շաբաթ Պէյճիկէն մէջ չին պաշտօնատարներու հետ բանակցութիւններ պիտի կատարէ:

Մամոյոյ աստուիտի մը ընթացքին Քալիուշնի ռուս, որ ուստական քարիւղի բոլոր ընկերութիւններուն նախագահները պիտի մասնակցին պատուիրակութեան:

Կառուցուելիք քարիւղատար կարողութիւնը պիտի ունենայ տարեկան 30 միլիոն թոն քարիւղ փոխադրել: Անկէկ արեւելեան Սիպերիոյ Անկարսք քաղաքը պիտի միացնէ Պէյճիկին:

Քարիւղատարին կառուցման ծրագիրը կը պատկանի Ռուսական ԵՈՒԻՔՈՍ ԵՈՒԻՔՕ - ՌԹՍ Եւ Թրանսնէֆթ ընկերութիւններուն:

Քալիուշնի ռուս, որ քարիւղատարին շինութիւնը պիտի արժէ 1,7 միլիարդ տոյար, Եւ բոլոր ընկերութիւնները պիտի մասնակցին ծախսերուն:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԵՐՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՆԸ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄՆԵՐՈՒ ԳԾՈՎ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ ԿԸ ՊԱՇԱՆՋԷ ԹՈՒՐԲԱՅԷՆ

ՊՈԼԻՍ, 9 (ՌՈՅ-ԹԸՐԸ).- Եւրոպական Միութիւնը Հինգշաբթի օր յայտնեց, թէ Թուրքիայէն վճարուած յանձնարարները մը կը պահանջէին կը վերաբերէր քաղաքական բարեկարգումներու ձեռնարկելու քայլերու՝ եթէ կ'ուէր Միութեան անդամակցիլ:

Ե. Միութեան ընդարձակման հարցերու պատասխանատու Կոմիսիոնը վերհետեւ, որ Թուրքիա կը գտնուէր նախաանդամակցութեան ռազմավարութիւն մը մշակելու նպատակով, ըսաւ, թէ բարեկարգումներու ընթացքը կախեալ է ներքին քաղաքական կամքէն:

Երկօրեայ այցելութեան մը առաջին օրը Պոլսոյ համալսարանին մէջ Ե. Միութեան ընդարձակման առընչուող հարցի մը ընթացքին ան շեշտեց, որ քաղաքական հիմնական բարեփոխումի կարիքը կայ:

Թուրքիա Հելսինքիի մէջ Դեկտեմբերին Ե. Միութեան անդամակցութեան թեկնածու դարձած էր. սակայն անիկա չէր հրաւիրուած միասնալու միւս 12 թեկնածուներու բանակցութեան, մինչեւ որ ժողովրդավարական բարեկարգումներու գծով յստաշրջանութիւն արձանագրէ:

Ե. Միութիւնը եւ Թուրքիա պիտի միջնորդէին անդամակցութեան ռազմավարութիւն մը մշակելու: Անգարայի կողմէ բարեկարգումի եւ ներառանկալու միջոցառումներուն մասնաւորապէս ներդրումը եւ ժամանակի ճշդելով:

ԱՆԳԱՄԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՐԿԱՐ ԺԱՄԱՆԱԿ ԿԸ ԿԱՐՍԻ

Ըստ նախատեսութեան, շուրջ 62 միլիոն բնակիչ հաշուող Թուրքիա բազմաթիւ տարիներու կը կարօտի Ե. Միութեան իրատ պայմանները լրացնելու համար:

Վերհետեւ դարձեալ շեշտեց, որ Անգարա չի լրացներ Ե. Միութեան Քոմիսիոնի շափանչներու քաղաքական երեսները, որոնք կը վերաբերին ժողովրդավարութեան, մարդկային իրաւունքներու, օրէնքի իշխանութեան եւ փոքրամասնութեան պաշտպանութեան:

ՏԵՂԱՏԱՐԱՐ ԱՆՁՐԵՆԵՐՈՒՆ ՊԱՏՃԱՌՈՒՎ

ՄՈՁԱՄՊԻՔԻ ԱՂԵՏԵԱԼՆԵՐՈՒՆ ՓՐԿԱՐԱՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԸ ՅԵՏԱԶԳՈՒՄ



Օժանդակութիւններու առաքում աղէտեակներուն

Տեղատարաւ անձրեւները երկ կ'պատճառ դարձան, որ փրկարար խմբակները դարձնեն Մոզամպիկի ողորդումներուն աղէտեակներուն փրկութեան եւ օգնութիւն հասցնելու աշխատանքները:

Ըստ տեղեկութիւններու, երկրին արեւմտեան շրջաններուն մէջ 20 հազար հոգի օգնութեան անմիջական կարիք ունի: ՄԱԿ-ի Մարդասիրական Օժանդակութիւններու Գրասենեակի պաշտօնատարները՝ Ռոզա Մալանկո յայտնեց, որ երկու անգամ փորձ կատարուած է իր կողմէ արեւմտեան շրջաններ ուղղուելու, սակայն օդի անորոշ պայմաններուն պատճառով օդանաւը երկու անգամ ալ չէ յաջողած թռիչք ամրոցացնել: «Կ'ուզեմք անպայման տեղեկանայ 20 հազար հոգիին մասին»: Ռուս ան: (ՌՈՅԹԸՐԸ)

ՈՒՔՐԱՆԻՍ

ԱԶԳԱՅՆԱԿԱՆՆԵՐ ԿԸ ԳՐԱԿԵՆ ՀԱՄԱՅՆԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ

Ուքրանացի խումբ մը ազգայնականներ երկ կ'գրաւեցին Համայնավար կուսակցութեան կեդրոնատեղին եւ սպառնացին հրոյ ճարակ դարձնել գայն, եթէ իրենց պահանջներուն գոհացում չտրուի:

Ազգայնականները կը պահանջեն Համայնավար կուսակցութիւնը արգիւտած հռչակել, Ուքրանիան դուրս բերել Անկախ Պետութիւններու Հասարակապետութենէն, ինչպէս նաեւ ուստական ուժերը հեռացնել երկրէն:

(ՌՈՅԹԸՐԸ)

Advertisement for 'ԱՅՍՕՐ ՎԱՆԱՅ ՁԱՅՆԷՆ' (Today's Special Offer) listing various products and their prices.

Advertisement for 'ԱԶԳԱՐԱՐԱԳԻՐ' (National Day) featuring a tuna can and other products.

Advertisement for 'ՎԱՆԱՅ ՁԱՅՆ' (Today's Special Offer) for a car.

Advertisement for Vileda disinfectant, showing a bottle and price.

Advertisement for Palmolive soap, showing a bar of soap and price.

Advertisement for Nivea cream, showing a jar and price.

Advertisement for Geisha tuna, showing a can and price.

Advertisement for a product, showing a can and price.

Advertisement for '1 ԲԻԼՕ ՇԱԻ' (1 Billion White) product, showing a bottle and price.

Advertisement for 'MASTER MALL' supermarket, featuring a shopping basket and various products.

Advertisement for a product, showing a bottle and price.

Advertisement for 'DER SHAMPOO' product, showing a bottle and price.

Advertisement for a product, showing a box and price.

Advertisement for a product, showing a box and price.

Advertisement for Dettol disinfectant, showing a bottle and price.

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐ՝ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՏՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի նախագահի գրասենյակի հաղորդեց, թե նախագահ Ռուպիկ Քոչարեան 6 Մարտին հրամանագիր ստորագրեց երկրի բարձրագույն զինուորական պաշտոններուն մասին:

Նկատի ունենալով, որ սահմանադրութեան համաձայն, նախագահը Հայաստանի զինուած ուժերու գլխավոր հրամանատարն է, հրամանագիրը կը սահմանէ, թէ նախագահը ինք կը վաւերացնէ զինուորական պաշտոններու միասնական ցանկը, զինուորականները կը նշանակէ այդ պաշտոններուն վրայ կամ զինուորական կոչում կու տայ անոնց, ինչպէս նաեւ գանձք կը պաշտոնազրկէ:

ՖԻԼՄԵՏ ԲԵՐԿԵԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ ՆՇԱՆԱԿՈՒԵՅԱԻ ԴԱԻԹ ՎԱՐԴԱՆԵԱՆՔԻ ՓՈԽԱՐԷՆ

Հայաստանի Կեդրոնական Ընտրական Յանձնախումբը իր 7 Մարտի Երեսօրէնի պետական ունեցուածքի նախարար Եղանակուած Կալիք Վարդանեանի փոխարէն Ազգային ժողովի պատգամաւոր գրանցեց Թիւրքուստի Բերկեան, որ Ազգային ժողովը ժողովարարական Միութեան համամասնական ցանկի լաջորդ պատգամաւորական թեկնածու էր:

Միւս կողմէ, Կեդրոնական Ընտրական Յանձնախումբի նախագահ Արտուր Սահարտեան լրագրողներուն յայտարարեց, թէ 21 Մայիսին Հայաստանի Ազգային ժողովի լրագրողի ընտրութիւններ տեղի պիտի ունենան 4 ընտրաշրջաններու մէջ:

Երեւանի թիւ 5 ընտրաշրջանէն մեծամասնական կարգով պատգամաւոր ընտրուած Լեւոնար Յակոբեան նախարար Եղանակուած է, իսկ մնացեալ ընտրաշրջաններէն պատգամաւոր ընտրուած են մահաճառ եւ Արմենակ Արմենակեան (27 Հոկտեմբերի ոճրային արարքին ընթացքին), Վահան Զատիկեան եւ Սուրեն Աւետիսեան:

ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՍԻՈՒԹԵԱՆ 90ԱՄԵԱԿ

ՊԵՐԹԻ ԲԻՆԿ՝ 90ԱՄԵԱԿԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԳԼԽԱՒՈՐ ԲԱՆԱԽՕՍ

Հայ Օգնութեան Միութեան Կեդրոնական Վարչութիւնը հաղորդագրութեամբ մը յայտարարեց, թէ Միութեան 90ամեակի տօնակատարութեան գլխաւոր բանախօսը պիտի ըլլայ ՄԱԿի Տնօնական եւ Ընկերային Խորհուրդին (ԷՔՈՍՕԲ) մէջ Ամերիկայի դեսպան Պէրթի Բինկ:

Տօնակատարութիւնը տեղի պիտի ունենայ յառաջիկայ 3 Ապրիլին Երեւանի մէջ: ՄԱԿի մէջ Հայաստանի մնայուն ներկայացուցչութեան հովանաւորութեամբ: Չեմարակին հրաւիրուած են նաեւ 12 երկիրներ, որ ԳՕՄը մասնաճիւղեր ունին:

Պէրթի Բինկ վերոյիշեալ Խորհուրդէն մերս դեսպան է 1997էն ի վեր: Ան հասարակական, երիտասարդական եւ առողջապահական գանձաւոր ծրագիրներու մէջ պատասխանատու պաշտօններ վարած է:

Յայտնենք, որ Հայ Օգնութեան Միութիւնը ԷՔՈՍՕԲի անդամ է 1998էն ի վեր:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԱՅԻՆ ՎՏԱՆԳԻ ՔԱՐՏԻՍԸ

7 Մարտին լրագրողներու հետ հանդիպման ընթացքին Հայաստանի երկրաշարժային պաշտպանութեան ազգային ծառայութեան ղեկավար Սերգէյ Բայասանեան յայտարարեց, թէ արդէն իսկ հրատարակուած է երկրագնդի երկրաշարժային վտանգի առաջին քարտէսը: Վերջինս պատրաստուած է շարժագիտական կարեւոր հաստատութիւններու 8 տարուան միասնական աշխատանքներուն շնորհիւ:

Բայասանեան ըստ, որ քարտէսի հրատարակութեան գործին մէջ մեծ ներդրում ունին նաեւ իր ղեկավարած հաստատութիւնը, որ ոչ միայն համահեղինակն է այդ քարտէսին, այլ նաեւ միջազգային համակարգող կոմիտէի կողմէ նշանակուած էր պատասխանատու: Կովկասի եւ յարակից շրջանին համար:

Ան աւելցուց, որ նոյնատեսակ թեքիքներով Հայաստանի երկրաշարժային պաշտպանութեան ազգային ծառայութիւնը քարտիսագրած էր նաեւ Խորիմ - Կովկաս - Քոփեթտակի, արեւելեան Թուրքիոյ եւ արեւմտեան Իրանի շրջանները:

Մասնաշրջաններ տեղեկացուց, որ անցեալ տարի Հայաստանի եւ շրջանային երկրորդներուն մէջ արձանագրուած է 210 ցնցում, իսկ Երեւանի մէջ Յունուար ամսուան ընթացքին արձանագրուեցաւ 33 ն 5 բայ ուժգնութեամբ 25, իսկ Փետրուարին՝ 13 ցնցում:

Աւելցնելով այստեղ, որ վերոյիշեալ քարտէսը ռազմավարական նշանակութիւն ունի բոլոր պետութիւններուն համար, որովհետեւ կը ներկայացնէ երկրաշարժային վտանգի 500 տարուան կանխտեսուած: Ան կը ներառէ քաղաքաշինութեան ճիշդ ծրագրաւորումը, բնակչութեան իրազեկութեան բարձրացումը եւ ուսուցումը:

Քարտէսին մէջ Հայաստան միակ երկիրն է, որ տեղադրուած է ամէնէն վտանգաւոր երկրաշարժային գոտիին մէջ:

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄ

Հայաստանի Գախագահի մամլոյ գրասենյակը հաղորդեց, որ Գախագահ Ռուպիկ Քոչարեան 7 Մարտի հրամանագիրով Վլադիմիր Կարմիրայեան Հայաստանի դեսպան Երասկուած Է Նորվեգիոյ եւ Ֆինլանդիայի մէջ:

ԱԼԵՔՍԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ԴԱՐՆՅՈՒՑ ՀԱՅԱՂՈՒԸ

27 Հոկտեմբերի ոճրային արարքը քաջալերած ըլլալով յանցանքով ամբաստանուած եւ Հայաստանի նախագահի նախկին խորհրդական Ալեքսան Զարուբիան զայն զրկեց իր անունը հացադուլը, որ սկսած էր 29 Փետրուարին՝ առ ի բողոք քննչութեան կամայականութիւններուն:

Զարուբիան հացադուլէն հրաժարած էր պաշտպանութեան վաճառքի միտքէն Սիւրէն Սահակեանի պահանջով: Սահակեան սպառնացած էր պաշտպանը շղարկեցնելու պարտաւոր հրաժարի ստորագրութեան պաշտպանութեան:

Ըստ Սիւրէն Սահակեանի, Ալեքսան Զարուբիան առողջական եւ հոգեբանական բնակարանում փնտրելու մէջ կը զբաղուի:

«ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻ ԵՒ ՊԵՏՈՒԹԻՒՆ» ԳԻՏԱԺՈՂՈՎՈՒ ԱՄԱՐՏԵՑ ԻՐ ԱՃԻՆԱՆՔՆԵՐԸ

Գախագահի հաղորդած էինք, որ Հայաստանի մէջ տեղի ունեցած «Հայոց եկեղեցիները եւ պետութիւնը» միջազգային գիտաժողովը: Գիտաժողովը իր աշխատանքները արտատեց 5 Մարտին՝ Կեչառիսի վանքին մէջ տեղի ունեցած ժամերգութեամբ: Ան կազմակերպուած էր 1700 մեծակի Գրասենյակի եւ Հիմնարար Գիտութիւններու Ազգային Կեդրոնի կողմէ:

Գիտաժողովին մասնակցողները գեկուցեցին Հայ Առաքելական Եկեղեցւոյ եւ պետութեան գործակցութեան, հոգեւորականութեան եւ աշխարհիկ իշխանութիւններու փոխյարաբերութեան, Հայաստանի մէջ աղանդաւորական շարժումներուն դէմ պայքարելու, ինչպէս նաեւ եկեղեցի - պետութիւններու սերտ յարաբերութիւններ ստեղծելու անհրաժեշտութեան մասին:

Գիտաժողովը վաւերացուց նաեւ երկրի իշխանութիւններուն անհրաժեշտութիւնը հոգեւորի նախագիծը, ուր պետութեան կ'առաջարկուի դաշինք կնքել հայ եկեղեցւոյ հետ: Հոյակապի վերջնական տարբերակը շուտով հանրութեան պիտի անդամաւորուի:

Կ'ենթադրուի, թէ պետութեան կողմէ ընդունուելիք համապատասխան օրէնքներուն մէջ պիտի մտնային Հայ Առաքելական Եկեղեցւոյ գերակայութիւնը, աղանդներու դէմ պայքարելու, նոր սերունդի բարոյա-հոգեբանական կրթութիւն տալու, բանակին մէջ կրօնի քարոզչութիւն կատարելու, ինչպէս նաեւ կարեւոր այլ ոլորտներու մէջ հայ եկեղեցւոյ դերը բարձրացնելու հարցերը:

ՀԱՄԱՉԱՍԻՆ «ԱՐԵՎ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԻՆ ԵԼՈՅԹՆԵՐԸ

«ԿԱԹՈՒԼ ՄԸ ՄԵՂՐ» ԱՌՈՅԳ ՄԿԻԶԲ ՄԸ

Ինչպէս կարելի է իրանանահայ մանուկը մօտեցնել պետութեան ոլորտներուն եւ մարդկային ու ազգային արժեքներու հաղորդակից դարձնել զայն: Որեւէ ժամանակէ աւելի այս հարցը հրատարակուած է ներկայիս, երբ գանգուածային մշակուած իր անսպասուած ու շագուցիչ նորութիւններով թիրախ ընտրած է մանուկը եւ կը միտի ստրկացնել զայն իր պարզեւած հաճոյքներով: Ինչպէս կարելի է մրցել Ուլիք Տիգրիսի շնչախարհիկ տիպարներուն եւ համակարգչային կյանքի կէլմէրուն հետ եւ առանց պարտադրանքի, այլ «կախարդական» ուժով ներգրաւել մանուկներն ու պատանիները, որպէսզի անոնք սիրեն այն, ինչ որ մարդուն ներաշարժին մաս կազմած է հազարաւոր տարիներէ ի վեր: Ինչպէս կարելի է այս բոլորը իրականացնել յուսեցի թուամենայնիւ մէկ հեթաթով...

... Պատասխանը այս օրերուն կը գտնուի «Յ. Տէր Մեղրեան» թատերադրանքի բեմին վրայ, ուր Համագայինի Շրջանային Վարչութեան կազմակերպութեամբ ելոյթ կ'ունենայ նորակազմ «Արեւ» մանկապատանեկան թատերախումբը՝ ներկայացնելով «Կաթիլ մը մեղր» թատերախաղը, բեմադրութեամբ հայրենի արեւստագէտ Վիգէն Ստեփանեանի: Աւելի քան 40 մանուկներ եւ պատանիներ դեր խաղալու վայելք մը կ'ապրին բեմին վրայ եւ իրենց վարակիչ խանդավառութեամբ երաշխաբեր կու տան «արուեստաճանաչ» ապագայ սերունդին:

◆ԵՄԱՂՈՒԹԻՒՆ

Դասական գործերու բեմադրութեան բազմաթիւ մօտեցումներ կան: Կարելի է գանձաբաժնի իրարու հակադիր գլխաւոր երկու տեսակներու: աւանդական եւ արդիական: Առաջինը կը ձգտի պահպանել ընթացի հարազատութիւնը եւ ընդունուած նախատիպարներու պատկերը, իսկ երկրորդը թուիչ կու տայ երեւակայութեան եւ ընթացի մը հոլմ նիւթը օգտագործելով՝ կրնայ զայն տեղադրել բոլորովին տարբեր ոլորտի մը մէջ: Կան նաեւ երկու մօտեցումներուն միջեւ տարբերողներ, որոնք ամէնէն աւելի կը քննարկուեն...

«Կաթիլ մը մեղր» կարելի է դասել տարբերողներուն շարքին: Մօտեցումին նպատակը յստակ է. դասական ընթացի մը միջոցով ստեղծել մանուկներուն աւտրեային աւնչուած տրամաբանութեամբ, դէպքերով եւ շարժումով եռուն թատերախաղ մը, միաժամանակ գանձաբաժնի հաղորդակից դարձնել զգային գրականութեան արժեքի մը եւ մարդկային կուլտուրայի յատկանիշները:

Թատերգութեան հեղինակ եւ բեմադրիչ Վիգէն Ստեփանեան նոյնիսկ իր խոստովանութեամբ՝ աւանդազոյն չափով «օգտագործած» է թուամենայնիւ պատկերաւոր հեթաթով, բեմական պատկերներ ստեղծելու համար: Թատերախաղը կը սկսի աւերակի գիւղի մը տեսարանով, ուր մեռելներ փռուած են գետին եւ ողջ մնացած է միայն փոքրիկ աղջիկ մը: Ան ներկայանալով կը հրաւիրէ տեսնելու, թէ ինչպէս պատահեցաւ աղջիկը: Կային երկու դրացի գիւղեր: Կար մեղրապան մը, որ դժգոհ էր իր կատուէն, որ գողցած էր իր կոշիկը, եւ հովիւ մը, որ Մեղրեան կը իր շունէն, որ յափած էր իր գնած մեղրը: Մեղրապանը կը վախնար իր կատուէն, կոշիկէն ու աղջիկէն, հովիւը կը վախցնէր իր կիներն ու մանուկը, բայց ոչ աւելի՝ քան շունը: Այս անասունները սկիզբէն խնդրալարային էին իրենց տրեւորուն համար: Կային պարզաձայն եւ հետաքրքիր գիւղացիներ: Կը թուէր, թէ արտա-



Չեմունայն հարկախառք

սովոր ոչինչ պատահած էր այս գիւղացիներուն կեանքին մէջ: Սակայն բաւարար էր, որ հովիւր իր շան հետ երթար մեղր գնելու դրացի գիւղէն եւ կ'սթիւ մը ինչոր գետին, ճանձ մը տղաբար, անպատկառ կատուն ցատկէր անոր վրայ եւ անօթի շունը կատարէր ու խեղդէր զայն... Հեթաթովի յատուկ անկարելի կարելիութեամբ, երկրորդ արարին մէջ մեղրապանն ու հովիւր կը դառնան հակամարտ եւ իրարու դէմ պատերազմ հռչակող թագաւորներ: Ինչո՞ւ, որովհետեւ «պետութիւններ նախկին կը յայտարարեն, յետոյ պատճառ մը կը գտնեն»: Տիպարներուն անունները հնարքով մը կը շրջուին, մեղրապան Սեղրակ կը դառնայ Կարդէ թագաւոր, հովիւ Համրոն՝ Որմահ թագաւոր, «որովհետեւ մարդուն դիրքը պայմանները, նոյնիսկ անուր կրնայ փոխուիլ, բայց ետիւնը ոչ: Եւ կարելու չէ գիւղացի էակ, թէ թագաւոր: Կարելու է անոր մէջ գտնուող առեւտրութիւնը, չարութիւնը, անգրգայնը, որ մարդը կրնայ վերածել գաղանի, ինչպէս կը գրէ թատերագիր իր խօսքին մէջ: Հնարքը մանուկներուն առիթ կու տայ «մեծ» խաղ մը խաղալու բեմին վրայ, դաւեր նիւթելու, ճառեր խօսելու, տողանցելու, կռիւ մղելու, մեռնելու եւ վերակենդանանալու: Ինչ որ կը կատարուի բեմին վրայ պարզապէս կատակ է, որպէս թատերու կեանք է, կեանքը թատերու»: փոքրիկ դերակատարներուն շարժումներն ու շեշտադրութիւնները կը բխեն այս գիտակցութենէն:

Հեթաթովին թատերականացումը ընտանեկան, ընկերային եւ քաղաքական տարբեր վիճակներ ներկայացնելու կարելիութիւնը կ'ընձեռէ: Անհնարաբար գաւառներ, որոնք կամքը պարտադրող կիներ, ժողովուրդը շահագործող ղեկավարներ... Սակայն միշտ չէ, որ այս պատկերները համոզիչ մտայնացնեն: Օրինակ, Հովիւրին



Հովիւ եւ Սեղրակաւ



«Կաթիլ մը մեղր ընկաւ ցած»...

սպանութիւնը ցաւ չի պատճառեր անոր գաւկին, որ յալու փոխարէն կը ցնծայ իր գոյնէն շան սատկելով: (Նոյնիսկ ախտաւոր ընկերութեան մը մէջ հայու կարեւոր է նման հակադրեցութեան հանդիպել):

Իսկ ո՞ր է թուամենայնիւ թատերախաղին մէջ: Պարզունակ կամ փողփողուն տարագներու այնպանութեան, գիւղական կամ ճոխ բեմադրաբանութիւն արագ փոփոխութիւններուն, հայկական ժողովրդային երանակներու եւ դասական երաժշտութեան իրարայայտող հնչեղանքներուն միջեւ, ինչպէս նաեւ արեւմտահայերէն եւ արեւելահայերէն լեզուներով խոսողներու խոսակցողով ստեղծուած լեզուական լարիւրութիւնները մէջ (յեզուն թատերախաղին խոցելի կէտն է, մանաւանդ՝ անյարմար ուսուցանողութիւններու եւ րացագանջութիւններու առկայութեամբ, ինչպէս «Օ ես»), թուամենայնիւ շունը կը մարմնաւորէ փոքրիկ աղջիկը (արդեօ ք խորհրդանշական նկատառումով): Ան մերթընդ մերթ բանաստեղծին տողերը կ'արտասանէ՝ պատմելով դէպքերու գարգացումը: Այնպէս թուամենայնիւ աշխարհին յատուկ հակադրուած գիւղի տոհմի երեւոյթները հագին նշմարելի են: սպանութիւններու եւ աւերի տեսարանները շեշտող տուտուկի նուազը եւ երբեմն գիւղացիներուն պարզամտութիւնը կը յիշեցնեն թուամենայնիւ հեթաթովին միջնորդները:

Աւանդազանքը թուամենայնիւ շեղում մը պիտի որակէին թատերախաղը, արդիապաշտները գայն յատուկ մեկնաբանութիւն մը պիտի չհամարէին, իսկ ոմանք պիտի գնահատէին կամ քննադատէին այս երկուքին միջեւ տարբերող կոճ:

◆ՆԱԳԱՐԿՈՒԹԻՒՆ

Հետեւողական հզոր ճիւղ կ'ենթադրէ մանուկներու տուտուցութեան, շեշտադրումի, շարժումներու եւ դերասանութեան կարողութիւնները բազմալի մակարդակի հասցնելը: Այս տեսակէտէն Վիգէն Ստեփանեան մասնագէտի ուսուցանանքներու եւ սկսնակներու աշխատանքով հրաշային նուաճում մը արձանագրեց իր անանահայ մանկապատանեկան թատերուն պատմութեան մէջ: Ամիսներու վրայ երկարող լուրջ ընթացումներու եւ թատերական հիմնական գիտելիքները ընթացող իր շողայ թատերախաղին ամբողջ տեսողութեան: Չեւակերպութեան հետո՞ւ՝ անկեղծ եւ ընկալական խաղարկութիւնը բեմադրիչին թատերական ուսուցումներուն հիմքը կը կազմէ: Իրօք, գրեթէ անհատապիկ տեսնել այս օրէնքին լուրջ կիրարկումը մանուկ դերակատարներուն կողմէ: Կը թուէ, թէ անոնցմէ շատերը պարզապէս իրենց սենեակին մէջ խաղ մը կը խաղան նոյնքան պարզ եւ անկաշկանդ:

Բեմադրիչը թատերախաղին տիպարները դրած է տեւական շարժումի մէջ: Իսկ այդ շարժումները ինքնանրպատակ չեն: Անոնք համարձակ քայլերով կ'երթեկեն, կը տողանցեն, կը կռուին, վայելուց ձեւերով «կը նուագեն», անհատապիկ ճարտարութեամբ ակնթարթի մը մէջ կը փոխեն բեմադրարարութեամբ միաժամանակ շարունակելով խաղարկութիւնը... Այս բոլոր իրադրուածումներուն շարքին այլեւս երկրորդական պիտի ըլլար դրուտեղի դերերու անսխալ յիշողութիւնը: «Կաթիլ մը մեղր»-ի բաները խոսակցութեան մը անմիջականութեամբ կը հնչեն, երկխոսութիւնները կը գարգանան հաճելի կը շոտիվով, բունագրօտիկ ոչինչ կայ «Արեւ»-ի փոքրիկ դերասաններուն ստեղծած աշխարհին մէջ:

* * *

Լիրանահայ յետ պատերազմեան մշակութային կեանքին մէջ «Արեւ»-ը մանկապատանեկան առաջին խումբը չէ, որ կը ներկայանայ Համագայինի կազմակերպութեամբ: Քաղաքացիական պատերազմի աւարտէն անմիջապէս ետք «Սիմոն Վրացեան» մասնաճիւղի նախաձեռնութեամբ «Փորձաշար»-ը արեւմտահայերէն կայացուց մանկապատանեկան թատերախաղեր, ինչպէս «Վախարակաւ Խլուղալ» եւ «Ա.Ա.Ա. յաջողութիւն»: Այս թատերախաղերը իրագործուած էին պատանի, ինչպէս նաեւ չափահաս ու փորձառու դերակատարներով եւ անոնցու ուղղուած էին մանուկներուն մէջ թատերի հանդէպ սէր ու հետաքրքրութիւն արթնցնելու նպատակով:

«Արեւ»-ը երկրորդ փորձ մըն է եւ նախորդին պէս ողջունելի: Անիկա գոյատեւելու ամէն տուեալ ունի...

ԵՐՈՒՄԱՂԷՄԷՆ ԿՐՈՋՆԻ.

ՎԵՐԱԿԱԶՄԵԼ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԿԻՍԱԳՈՒՆԴԻ ԱՌԱՆՅՔԸ

Քաղաքական իրադարձություններու իրեն բնական հետևանք կամ աշխարհաքաղաքական «անակնկալ» տեղաշարժի մը իբրև արդիւնք՝ իւրաքանչիւր ժամանակաշրջանի մեծ պետութիւններու ուշադրութիւնը յանկարծ կը շեղի աւանդական կիզակետէն մը եւ կը հանգչի այլ կետերու մը վրայ: Այսպիսի երևույթի մը է, որ կ'անդրադառնայ վարի սիւնակներով ներկայացուած վերլուծութիւնը, որ լուսարձակի տակ կ'առնէ Կովկասի կայունութիւնը՝ իբրև երաշխիք ռուսական եւ ամերիկեան շահերու ապահովութեան: Այս ծիրէն ներս անշուշտ կ'ործարժուի նաեւ Թուրքիոյ դիրքորոշումներու դրսևորումը: Սակայն հետաքրքրական է այն կետը, որ Անգարան եւ անոր շրջապատը ներկայացնելու համար յօդուածագիրին տուած աշխարհագրական նկարագրութիւնը կը համապատասխանէ հայկական հողատարածքներուն:

Նախորդ տասնամեակի քաղաքական կեդրոնի փոփոխութեան վերլուծումը ընելէ ետք, յօդուածագիրը նման փոփոխութեան մը գալիք կեդրոնը կը տեսնէ Հայաստանն ու անոր շրջակայքը, եւ ապա հարց կու տայ, թէ ի՞նչ կրնան ըլլալ Միացեալ Նահանգներու շահերը շրջանին մէջ:

Պաղ Պատերազմէն ի վեր մենք կը զբաղուինք այնպիսի վարկերով, որոնք կարծես սերունդներ առաջ թաղուած էին պատմութեան կողմէ: 1985ին ո՞վ կրնար երեսակայել, թէ աշխարհի ղեկավարները մտապաշարուած պիտի ըլլան ինչ Արաբեայի, Փրիշթինայի եւ Կորգոնի մասին քաղաքներով: Ո՞վ կրնար ենթադրել, թէ Պէլ-րուրը, Դամասկոսն ու Երուսաղէմը լուսանցքի մէջ պիտի մնային, եւ թէ աշխարհի ղեկավարները իրենց ժողովին ընթացքին հարեւանցիօրէն պիտի անդրադառնային անոնց մասին: Տարօրինակօրէն, տասնամեակի մը մէջ վերադասաւորուեցաւ տագնապներու աշխարհագրութիւնը:

Ղեկավարներու ուշադրութեան այս տեղափոխումը հիմնական փոփոխութիւն մը կը ներկայացնէ շրջանի աշխարհաքաղաքականութեան մէջ. շրջան մը. ուր Ասիան, Եւրոպան եւ Աֆրիկէն կը հանդիպին. եւ որ կը ներկայացնէ արեւելեան կիսագունդի առանցքը: Կեդրոնը կը գտնուի Թուրքիան. որ հիւրընկալեց ինչպէս Վերջին վեհաժողովը: Այս առանցքին մէջ են նաեւ արեւելեան երկիրները, որոնք կը գտնուին Միջերկրականի արեւելեան ափին եւ Եգիպտոսն ու Աֆրիկէն կը կապեն Արեւելքին. այդ երկիրներու շարքին են՝ Սուրիան, Լիբանանն ու Իսրայէլը: Այնպէս որ արեւելք կը գտնուի Իրանը, որ կը համարուի դէպի Էնդլիստան եւ Ասիոյ մնացեալ շրջաններ տանող ցամաքային հիմնական ճամբան: Այդ առանցքի հիւսիս արեւմուտքը կը գրաւեն Պալեստինան եւ Միջդանուբեան երկիրները, որոնք կը ներկայացնեն դէպի Եւրոպա տանող ճամբան: Եւ վերջապէս, հիւսիսը կը գտնուի Կովկասը դէպի Ռուսիոյ սիրտը առաջնորդող ճամբան:

Եթէ հազար տղոն շատաւիղ ունեցող շրջանակ մը գծենք, կեդրոն ունենալով Անգարան, շրջագծին մէջ առած պիտի ըլլանք թէ՛ արեւելեան կիսագունդի խաչմերուկները, թէ՛ այն շրջանը, որոնք հոռուեական ժամանակներէն ի վեր քաղաքական տագնապներով յատկանշուած են: Այս շրջանակը անշուշտ չ'ընդգրկելու աշխարհի բոլոր տագնապայի կեդրոնները, սակայն դարձերու ընթացքին անոր իւրաքանչիւր մասնաշաղկապ տարածութիւնն անգամ տագնապներու կիզակետ հանդիսացած է: Կայսրութիւններ ստեղծուած եւ փլուծ են այս շրջանի մէջ: Որքան համաշխարհային ուժ չի կրնար գոյատևել, եթէ յստակ պատկերացում չունի արեւելեան կիսագունդին մէջ իր վարկի քաղաքականութեան մասին: Ոչ մէկ պետութիւն կրնայ

որոշ քաղաքականութիւն վարել արեւելեան կիսագունդին մէջ՝ առանց գուրահեռ քաղաքականութիւն մը ունենալու անոր առանցքին մէջ: Չուրահեռ քաղաքականութիւնը անհրաժեշտ է ըմբռնելու համար երկրագունդի այդ արեւելեան կէտի ուժակայունութիւնը:

Երբ քաղաքականութեան վերաբերեալ իրարու հակառակորդ պետութիւններէ եւ այս երեւոյթը անխուսափելի հետեւանք է անոր աշխարհագրական կազմուածքին: Հիմնապէս լեռներու հարաւը գտնուող շրջանին մէջ երոպական, աֆրիկեան կամ ասիական կայսրութեան մը ստեղծումը կը պահանջէ այս շրջանին ապահովութիւնը: Ապագայի աշխարհակայները պետք է նուաճեն անոր կարելուք մեծ մասը կամ ամբողջութիւնը եւ կամ այլ պէտք է դաշնակցային կապեր հիմնեն շրջանի ռազմավարական դիրք ունեցող երկիրներուն հետ: Այս ազգերու գոյատևումը կախեալ է շրջանի մակերեսով, որ անապատային եւ լեռնային ըլլալով՝ մնայուն կերպով ենթակալ է քաղաքական հոսանքի բազմաթիւ շեղումներու:

Պալեստինէն Կովկաս եւ մինչեւ լիբանանեան բարձունքներ ազգերու ճոխ երանգապնակ մը կ'ապրի սերտ կապերով: Անոնք յաճախ զիրար կ'ատնեն օտարներուն համար ահհասկնալի կիրքով մը: Իւրաքանչիւր ազգի պատմութիւն լի է իր դէմ գործուած բռնարարներով, որոնք յաճախ կ'արդարացուին փոխադարձ փոխվրէժի պահանջով: Յանգամայն փնտրող օտարական մը, որ կը ջանայ բարոյական տարագ մը գտնել, շուտով կրնայ խելագարիլ:

Անըմբռնելի շրջանային աշխարհաքաղաքականութիւնը կը դժուարացնէ դրսեցիներու մտայնութիւնը: Սակայն կարելի չէ Եւրոպան ապահով վարկի մը վերածել առանց պայքարներուն դէմ պատմել հաստատելու: Ոչ այլ Ռուսիան ապահով է, երբ Կովկասը քառսի մէջ է: Անկարելի է պաշտպանել Եգիպտոսն ու Իսրայէլը՝ առանց հակակշռելու լիբանանեան լեռները:

Երկիրներ լիքեալ շրջանները կ'երթան ոչ թէ նուաճելու, այլ իրենց նուաճումները պաշտպանելու համար: Ռուսիա անոնք բարարար ուժ չեն ձգել իրենց ետին, այլ՝ կայսրութեան մը սնանկորդներ: Երբ անը հասկնալու համար պէտք է լաւ հասկնալ շրջանային եւ համաշխարհային աշխարհաքաղաքականութեան միջեւ կապը: Երբ անը բնիկ ուժերուն միջեւ յարաբերութիւնները մնայուն բնույթ ունին: Հսկայ կայսրութիւնները մէջտեղ կու գան եւ կը սկսին շահագործել իրենց շուրջը գտնուող երկիրներուն միջեւ ընթացող տեղայնական անհամաձայնութիւնները եւ այսպէսով կ'ընդարձակեն իրենց ազդեցութեան հատողութեան սահմանները: Կայսրութիւնները կը վերաճեաւորեն շրջանը՝ միաժամանակ իրենք զիրենք վերակազմաւորելով:

Վերջին սերունդի շրջանային աշխարհաքաղաքականութիւնը կը բացատրէ խորհրդային եւ ամերիկեան կայսրութիւններու միջեւ բախումներով:

Բ. Աշխարհամարտէն ետք Միացեալ Նահանգներ փորձեցին Արեւմտեան Եւրոպան հետոյ պահել ռուսական ազդեցութենէն: Այս նպատակով Ամերիկա ուժ հաստատեց Արեւմտեան Գերմանիոյ մէջ եւ, սկսելու համար, փորձեց արգիլել Ռուսիոյ կողմէ Միջերկրականի նաւահանգիստներու օգտագործումը: Երբ երկիրներ ճակատագրական դէր ունէին այս գծով՝ Եւրոպայի մասին, Յունաստանը եւ Թուրքիան: Այլ խօսքով, Միացեալ Նահանգներ ստիպուած էին հաստատուիլ շրջանին մէջ՝ պաշտպանելու համար Արեւմտեան Եւրոպան. դասական օրինակ մը ամերիկեան քաղաքականութեան: Անրկաշխարհային ըլլալ առանցքային շրջաններու մէջ, առանց որեւէ շրջանային շահ հետապնդող պատճառներու:

1940ի վերջերը խորհրդայինները փորձեցին անպայման մտտը գործել շրջան. անոնք քաղաքացիական պատերազմներ հրահրեցին Յունաստանի եւ Թուրքիոյ մէջ: Եւրոպայի մասին անպայման կառավարութիւն ունէր, սակայն հակառակ Արեւելեան Եւրոպայի մնացեալ երկիրներուն, կրցած էր ձեռքազատիլ Գերմանիոյ ազդեցութենէն եւ գիտէր, որ Ռուսիոյ շրջան մտտը վերջ պիտի դնէ իր ինքնավարութեան: Անկախութիւնը զինուած չէ գործութեան քաղաքականութիւն մը՝ պաշտպանողական դիրք բռնելով Ռուսիոյ հանդէպ, իսկ միւս կողմէ՝ լուելեան համագործակցելով ՕԹԱՆ-ի հետ: Յունական եւ թրքական ապրտամբութիւնները ճգմունցան եւ ամերիկեան ազդեցութեան գիծը Կովկասը երկուքի բաժնելով հասաւ մինչեւ Իրան եւ խարսխուեցաւ Փաքիստանի հիւսիսային լեռներուն վրայ:

Շրջան թափանցելու ռուսական ձայնորդութիւնը պատճառ դարձաւ, որ անոնք դիմեն նահանգի ռազմավարութեան՝ նպատակ ունենալով շրջանակէլ Թուրքիան: 1950ական թուականներուն ռուսե-

րը յաջողեցան հակառակ ռիկեան կառավարութիւններ կազմել Սուրիոյ եւ Իրաքի մէջ: Ռազմավարականօրէն տրամաբանական քայլ մըն էր այս մէկը: Թուրքիան արգելք էր դէպի հարաւ ռուսական ընդլայնումին: Փորձելով մէկ կողմէ Ռուսիոյ եւ միւս կողմէ Ռուսիոյ հարաւային բարեկամներուն միջեւ պահել Թուրքիան, ռուսերը կը յուսային յաւելելով ճնշում բանեցնելով պարտութեան մատնել գալն:

Սուրիոյ եւ Իրաքի քաղաքական ուղղութեան փոփոխութիւնը պատճառ դարձաւ, որ Միացեալ Նահանգներ արեւելի եւս վստահին Իսրայէլի. Ալեուտական Արաբիոյ եւ Իրանի, որոնցմէ իւրաքանչիւրը օժանդակեց Թուրքիոյ վրայ բանեցում ճնշումի նուազեցման: Ռուսի, մինչ 1950ականներուն Իսրայէլ շատ փոքր ռազմավարական կարեւորութիւն ունէր Միացեալ Նահանգներուն համար, 1960ականներուն կ'սերունդ անկախ բանալի դեր ստաճնէր շրջանին մէջ: Իբրեւ հակադարձութիւն՝ Ռուսիա փորձեց համարաբարական շարժում մը յառաջացնել գլխաւորաբար Իսրայէլի դէմ եւ կեդրոնացաւ արեւելի պահպանողական արաբական երկիրներուն վրայ, ինչպէս՝ Ալեուտական Արաբիա. Բուելթ, նաեւ Իրան:

Պաղ Պատերազմի ընթացքին, ուրեմն, աշխարհաքաղաքական գործունէութեան կեդրոնը Թուրքիոյ հարան էր: Եւրոպայի մէջ դէպի Սեւ ծով եւ ռուս-թրքական սահմանը երկարող գիծը ստանձ էր. ոչ մէկ գործունէութիւն կը տարէր հոն: Այդ առանցքային շրջանի աշխուժ մասը ուղղակի Թուրքիոյ հարան էր եւ հետապնդող իմասական հարցերը կ'առնուէին արաբ-իսրայէլեան տագնապին, Լիբանանի իրավիճակին եւ քրտական հարցին: Միակայն այս բոլորին հիմքը կը կազմէր Թուրքիոյ միջոցով Ռուսիան շրջանակէլու հարցը:

Կարելի է հակակալ նաեւ, թէ այս ժամանակաշրջանին Պոստիւլէն մինչեւ Հայաստան ընթացող աշխարհաքաղաքական մանր հարցերը անտեսուած էին աշխարհի մեծերուն կողմէ, որոնք իրենց յստակ պատճառներով շրջանային համեմատութիւններէն դուրս հանեցին արաբ-իսրայէլեան հարցը: Յիշենք, թէ 1980ական թուականներուն Լիբանանի մարտնի համայնքին մէջ ծագած հարցերը որքան մեծ եւ համաշխարհային կարեւորութիւն ստացան:

Երկրային այդ հարցի համաշխարհային կարեւորութիւնը նուազած է, հակառակ անոր որ անկախ շրջանային մեծ կարեւորութիւն ունի տակաւին: Պաղ Պատերազմէն ետք մինչ Ռուսիա կը հետանար իր նախկին սահմաններէն, շրջանի ընդհանուր աշխարհաքաղաքականութիւնը հիմնականօրէն փոխուեցաւ: Ռուսական զօրքերու Հունգարիայէն քաշուիլը վերջ մը դրաւ Ռուսիոյ կողմէ Եւրոպայի մասին վտանգին, իսկ Կովկասի երկիրներէն Ռուսիոյ քաշուիլը վերջուց Թուրքիոյ սպառնացող վտանգը:

Ռուսիոյ փլուզումով Թուրքիան արդէն կորսնցուց 1948էն 1992ի միջեւ իր ունեցած կարեւոր դերը: Անոր հիւսիսային սահմանէն ճնշումի վերացումով Սուրիան եւ Իրաքը եղան խոցելի երկիրներ: Սուրիան սեղմուած էր Իսրայէլի եւ Թուրքիոյ միջեւ, իսկ Իրաք բանտարկուած էր հարաւէն՝ ամերիկեան ուժերու, իսկ հիւսիսէն՝ թրքական եւ ամերիկեան ուժերու եւ արեւելքէն՝ Իրանի միջեւ:

